35. ՍԱԼԴԱԹԸ

Մեհետ մին սալդաթ ա ինում ուրան պռատումը վրենը կացած։ Թաքավերեն տղան մին ջուվարու նհետ զրուց ընելավ համ կլամ ա, քյինում, համ էլ, թա.— Մին իրեք հազար մանեթս բեգար, քյինի վաճառականեն ախճիգը պիրի։

Էտ սալդաթը ըսկանում ա, թա.— Քու իստինըտ, ինդինըտ, յրես առանց մին կըպեկի էտ ախճիգը կպիրիմ։

Թաքավերեն տղան քյինում ա հորը, թա.— Ցրես իստի ըսեցե, մին սալդաթ իստի ասից։

Թաքավերը ծեն ա տամ էտ սըլդաթեն տանում, թա.—Էն հի՞նչ ա իլա՛լ, վեր ինդի յրս ասալ։

Սալդաթն ասում ա.— Պա դե կկարիմ պիրիմ։ Թաքավերին ասում ա.— Մին թոխտ տոք, վեր ամմեն հինչ անելի իրավունք օնիմ, միչև անքամ մարթ ըսպանելի իրավունք օնիմ, համ էլ իրեք տարե սրոկ տոք, պիրիմ։

Թաքավերը ռազի յա կենում։ Ըտրան իտի մին թոխտ ա տամ, համ էլ իրեք տարե սրոկ ա տամ։

Էտ սալդաթը լոխ յոր ա օնում, քյինում։ Քյինիյիս չախը մին գեներալ ա ջիհում։ Էտ սալդաթը իսկյի մհալ էլ չի տինում, շուրուխը ծիքյ տալավ քյինում ա։ Էտ գեներալը կզնվում ա, ըսկսում ուշունց տալը։ Սալդաթը թոխտը տուս ա օնում, նշանց տամ, վեր իրավունք օնե ըսպանե։ Գեներալը տուս ա օնում, մին իրեք հազար մանեթ տամ, աղաղվում։ Սալդաթը քյինում ա, տրեսնում սլդըթ-

ներեն մեծը սլգրթնուն հրդրցնում ա։ Սուա ըրած, չուբուխը քշիլավ քյինում ա, քշտուռնավը անց կենում, էտ սլդրթնուն մրեծը ետ ա տրեռնում, ըսկսում ըտրան ուշունց տալը։

Սալդաթը թոխտը տուս ա օնում, նշանց տամ, մին վեց հազար մանեթ էլ ըտրանա ինքյ օնում, քյինում։ Քյինում ա ամենալավ պիներան, ամմեն հինչան զակազ տամ, պիրում, լավ ստոլ սարքում, ղրաղեն նստում։ Նշում ա, տեսնում վաճառականեն ախճիգյը մին գեներալու նհետ կյամ ա։

Էտ ախճիգյը վեր էտ սլդաթեն իտի տեսնում ա, գեներալեն ասում ա.— Տու գեներալ ինիլավըտ կարում չըս, թա ինդի պեներ առնիս, ամմա սալդաթն առնում ա։

Վերչը ուրանք էլ ընդեղ ղոնաղ ըն ընգնում, օտում պրծնում։

Էտ ախճիգյը գեներալին ասում ա.— Քյինի էն հինչ տրեղը, ասե էս հինչ վաճառականեն ըխճրկանը զակազ տված սըհաթը տոք։ Փողը տոք, երկալ, էս հինչ ժամեն եք էս հինչ տրեղը։

Էտ վեր էն ախճիգյն ասում ա, սալդաթը լոխ ըսկանում ա, ինքյը եր ա կենում ըռաշկեն քյինում, միկա իվիլ փող տամ, սըհաթը յոր օնում, ասած ժամեն քյինում, քյինդիրավը պիցրանում, քյինում ըխճրկանը կոշտը։ Մթեն ա ինում, էն ախճիգյը ճընանչում չի, գյիդում ա, թա գեներալն ա։

Սալդաթը սըհաթը տամ ա ուրան, պրծնում, թա քյինի, դասիգան մուտանան վեր ա քրցում, ասում.— Մուտանաս վեր ընգավ։

Էն ախճիգյը ասում ա.— Իմս տու եր կալ, էքյուծ յրես քունը կքթենամ պիրիմ, կփոխինքյ։

Մուտանան յոր ա օնում, պրծնում, թա.— Մննանուցս էլ ա վեր ընգալ։

Էս ախճիգյը էլհա ուրան մննանուցը տամ ա սլդաթեն։ Սալդաթը յոր ա օնում, քյինում։ Վեր լունանում ա, էտ սալդաթը էլհա քյինում ա ստոլ սարքում, ընդեղ նստում, մուտանան, մննանուցը մանումը, ծեռքը տինում ճկատեն։

Վաճառականեն ախճիգյը կյամ ա, իտի տեսնում, թա.— Ցրես օղում ըմ քյրեզ նհետ ծանոթանամ։

Սալդաթն ասում ա.— Ցրես մին հասարակ սալդաթ, տու վաճառականու ախճիգյ, հո՞ւնց ծանոթանանք։

Ախճիգյըն ասում ա.— Վնաս չունե։

Ծանոթանում ըն, թաքուն խոսք տամ, վեր փրսակվին։ Էտ ըխճրկանը հաբը գյուգում չի՞։ Ըտրա մին կորած պարախոդ ա ինում, հայտարարում ա, վեր ծախում ա։ Էտ սալդաթը ինքյ ա օնում։

Պարախոդը վեր քթենում ա, սալդաթը ապրանքը լոխ տուս ա տամ, յոր օնում։

Վաճառականը կյամ ա, տեսնում, ասում.— Եք յրես տու պարիկամանանք։

Իտի էլ անում ըն, ախճիգյը տամ ա էտ սլդաթեն։ Իրեք տարեն վեր թմամում ա, էտ սալդաթը վաճառականեն ախճիգյը յոր ա օնում, քյինում, թա.— Թաքավերն ապրած կենա, վաճառականեն ախճիգյը պերալ ըմ։

Թաքավերը նորու հրսանեքյ ա անում։